Ուստր

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

*Archbishop Torkom Manoogian, Primate*

Թիւ 23355
Փետրուար 11, 1972

Հոգեշնորհ
Տ. Միւռոն Ծ. Վրդ. Կրճիկեան
Հովիւ Ս. Փրկիչ Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուստր.

Սիրելի Հայր Միւռոն,

Ստացած ենք 1972 Փետրուար 7 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 23ին գումարուած Ձեր ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Չարլզ Կարապետեան
Կիլպըրթ Մարգարեան
Լէոն Խաչատուրեան
Փիթըր Նալպանտեան
Դաւիթ Ատիշեան
Ճորճ Մկրտիչեան